



«ԱՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

N 1501-L

«28» հոկտեմբերի 2024 թ.
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՏՔԱՅՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 22-ի N 652-Ա հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, այսուհետ՝ Թատրոն, կանոնադրության 25-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով՝

հրամայում եմ.

1. Թատրոնում նոր բեմադրվող մանկական օպերային ներկայացումներում ներգրավված մասնակիցների հետ վոկալի դասընթացներ անցկացնելու նպատակով ստեղծել «Մանկական երաժշտական ներկայացումների վոկալի գծով դասուսույց» 1 հաստիքային միավոր, գեղարվեստաստեղծագործական ստորաբաժանում և բեմադրական մասում:

2. Սույն հրամանի 1-ին կետի պահանջներից ելնելով Թատրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքը սահմանելու, հաստիքացուցակը հաստատելու և տնօրենի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 455-L հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 877-L հրամանով հաստատված N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) ուժը կորցրած ճանաչել 9.1-րդ բաժնի 6-րդ կետը:

2) 9-րդ բաժնի 2.1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2-րդ կետով՝

«

2.2	Մանկական երաժշտական ներկայացումների վոկալի գծով դասուսույց	0	1.0				
-----	--	---	-----	--	--	--	--

»:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Թատրոնի հասարակայնության, հանդիսատեսի հետ կապերի և մարքեթինգի բաժնին՝ սույն հրամանը հրապարակել Թատրոնի կայքէջում:

Թատրոնի տնօրենի
լիազորություններն իրականացնող՝

Կ. Կիրակոսյան

ք. Երևան

«28» հոկտեմբերի 2024 թ.